

328(47)

2-11 3K6

ПРОЛЕТАРИИ ВСЕХ СТРАН, СОЕДИНЯЙТЕСЬ!  
ПРОЛЕТАРІ ВСІХ КРАЇН, ЄДНАЙТЕСЯ!  
ПРОЛЕТАРЫ УСІХ КРАЇН, ЯДНАЙЦЕСЯ!  
БУТУН ДУНЁ ПРОЛЕТАРЛАРИ, БИРЛАШИНГИЗИ!  
БАРЛЫК ЕЛДЕРДИҢ ПРОЛЕТАРЛАРЫ, БИРІГІНДЕР!  
කැමැත්තෑනිසා සමඟ එකවර, එකවරයො!  
БҮТҮН ӨЛКӨЛӨРИН ПРОЛЕТАРЛАРЫ, БИРЛЭШИН!



VISU ŠALIŲ PROLETARAI, VIENYKITĖSI!  
ПРОЛЕТАРЬ ДИН ТОАТЕ ЦӘРИЛЕ, УНИЦИ-ВӘ!  
VISU ZEMJU PROLETĀRIEŠI, SAVIENOJĪETIES!  
БАРДЫК ӨЛКӨЛӨРДҮН ПРОЛЕТАРЛАРЫ, БИРИККИЛЕ!  
ПРОЛЕТАРХОИ ХАМАИ МАМЛАКАТХО, ЯК ШАВЕДИ!  
എറുപ്പെടുന്തെ ഒന്നിനു ഒന്നിന്മേലേ, ഏകമേ!  
ӘХЛИ ЮРТЛАРЫҢ ПРОЛЕТАРЛАРЫ, БИРЛЕШИН!  
KÖIGI MAADE PROLETAARLASED, ÖHINEGE!

**ՍՈՎԵՏԱԿԱՆ**  
**ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ՄԻՈՒԹՅԱՆ**  
**ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ**  
**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ 39-րդ ՏԱՐԻ

№ 51 (1865)

22 դեկտեմբերի 1976 թ.

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
Մ Ո Ս Կ Վ Ա

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ  
Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ 39-ՐԴ ՏԱՐԻ

№ 51 (1865)

22 դեկտեմբերի 1976 թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ընկեր Լեոնիդ Իլիչ Բրեժնևին:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

- 733. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը «Ինտերսպուտնիկ» տիեզերական կայի միջազգային կազմակերպության իրավունակության, արտոնությունների և իմունիտետների վերաբերյալ համաձայնագիրը վավերացնելու մասին:
- 734. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը էլեկտրակայի միջազգային կոնվենցիան վավերացնելու մասին:
- 735. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Տնտեսական և տեխնիկական համագործակցության 1961 թվականի հունիսի 2-ի սովետա-սոմալիական համաձայնագրի արձանագրությունը վավերացնելու մասին:
- 736. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գվինեա-Բիսաուի Հանրապետության հյուպատոսական կոնվենցիան վավերացնելու մասին:

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

- 737. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Ժորժ Կոնիոլին Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
- 738. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ն. Զ. Շամոտային Լենինի շքանշանով պարգևատրելու մասին:
- 739. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Յա. Ա. Մալիկին Լենինի շքանշանով պարգևատրելու մասին:
- 740. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Ն. Պ. Բոգդանովին Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով պարգևատրելու մասին:

- 741. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը պորտուգալական կոմպոզիտոր Ֆեռնանդո Լոպեշ Գրասին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:
- 742. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Ն. Ֆ. Մանույլովին, Ա. Յու. Մոկրենկոյին և Ն. Ա. Սուբինային ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում շնորհելու մասին:
- 743. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, Սովետական Միության հերոս, Սոցիալիստական աշխատանքի հերոս ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին և Լենինի շքանշանով և «Ոսկե աստղ» երկրորդ մեդալով պարգևատրելու մասին:
- 744. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ պաշտպանության խորհրդի նախագահ, Սովետական Միության մարշալ Լ. Ի. Բրեժնևին ՍՍՀՄ պետական զբոսի ոսկեդրոշմ պատվերով պատվավոր զննքով պարգևատրելու մասին:
- 745. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Ի. Տ. Նովիկովին և Լենինի շքանշանով պարգևատրելու մասին:
- 746. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ընկ. Ն. Գեորգիևին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին:

ԵՐՐՈՐԳ ԲԱԺԻՆ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունում:

Ընդունելություն Ն. Վ. Պոդգոնու մոտ:

«Հերոսուհի մայր» պատվավոր կոչման շնորհում բազմազավակ մայրերին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի պատվիրակության ուղևորությունը Բիրմական Միություն Սոցիալիստական Հանրապետություն:

Կոմյունիկե ՍՍՀՄ Գերագույն սովետի Միության սովետի և Ազգությունների սովետի արտաքին գործերի հանձնաժողովների պատվիրակության Ֆրանսիայում գտնվելու մասին:

ՍՍՀՄ-ի պատվիրակությունը Մեքսիկայում:

Վարչա-տերիտորիալ բաժանման փոփոխությունների մասին:

Еженедельное издание Верховного Совета СССР на армянском и русском языках


Адрес Отдела опубликования актов Верховного Совета СССР при Секретариате Президиума Верховного Совета СССР:

103795, Москва, Центр, ГСП 3, улица Чехова, 3. Телефон 299-39-14.

Издательство — Центр, Пушкинская пл., 5. Телефон отдела распространения и экспедирования 299-00-08 доб. 4-37.

27/ХІІ-76 г. Формат 70×1/16. Бумага тип. № 1. Печ. л. 2,0. Усл. печ. л. 2,8. Зак. 4063.

Типография издательства «Известия Советов депутатов трудящихся СССР» имени И. И. Скворцова-Степанова. Москва, Пушкинская пл., 5.



ԸՆԿԵՐ ԼԵՈՆԻԴ ԻԼՅԻՉ ԲՐԵՃՆԵՎԻՆ

Թանկագին Լեոնիդ Իլյիչ:

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը Ձեր յոթնամյա ամսյակի օրը շերմորեն և ի սրտե ողջունում են Ձեզ՝ սովետական ժողովրդի հավատարիմ զավակիդ, կոմունիստական կուսակցության, սովետական պետության և միջազգային կոմունիստական շարժման ակնավոր գործչիդ, խաղաղության և սոցիալական առաջադիմության բոցաշունչ մարտիկիդ, հետևողական մարքսիստ-լենինյանիդ:

Ձեր անխոնջ ու բեղմնավոր գործունեությունը, Լեոնիդ Իլյիչ, հայրենիքին, լենինյան կուսակցությանը, կոմունիզմի գործին անձնվիրաբար ծառայելու ոգեշնչող օրինակ է: Այն բոլոր պոստերում, ուր Ձեզ առաջ է քաշել կուսակցությունը, բոլոր այն պատասխանատու խնդիրների լուծման գործում, որոնք նա Ձեզ հանձնարարել է, Դուք միշտ էլ պատվով եք արդարացրել և արդարացնում եք ցույց տրված վստահությունը:

Ձեր անսպառ եռանդը, կուսակցական սկզբունքայնությունը, ժողովրդի կյանքի հետ անխզելի կապը խոր ակունքներ ունեն: Պատանեկան տարիներին կանգնելով աշխատանքի մեծ բանակի շարքում, Դուք, Լեոնիդ Իլյիչ, միլիոնավոր հասակակիցների հետ վստահորեն առաջ էիք ընթանում սովետական իշխանության բացած ճանապարհով, գործարանում կատարած աշխատանքը զուգորդելով գիտելիքների հաստատակամ տիրապետման հետ: Բանվորական կոլեկտիվում անցկացրած կյանքը Ձեզ սովեց աշխատավորների խոհերի և իղձերի խոր ըմբռնում: Որպես բանվոր, ինժեներ, կուսակցական աշխատող, Դուք առաջին հնգամյակների տարիներին միշտ գտնվում էիք սոցիալիստական ինդուստրիայի և կոլտնտեսային կարգերի զարգացման հարվածային ուղղություններում:

Երբ ֆաշիստական Գերմանիայի ավազակային հարձակումը մեր հայրենիքին կանգնեցրեց մահացու վտանգի առաջ, Դուք Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից կանգնեցիք ռազմիկների շարքերում և կովեցիք մինչև լիակատար հաղթանակը: Կովկասի ճակատամարտը, առասպելական «Մալայա Ջեմլան», հիտլերյան օկուպանտների վոնդումը Ղրիմից, Ուկրաինայից, Լեհաստանի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի ազատագրումը՝ այսպիսիք են կանգնեցրել փառահեղ ճանապարհի ուղենիշները, որոնց ճակատամարտերում դրսևորվեցին նաև Ձեր մարտական սխրագործությունն ու անձնական արիությունը, որի համար հայրենիքը Ձեզ արժանացրեց Սովետական Միության հերոսի կոչման:

Հայրենական մեծ պատերազմից հետո Դուք, որպես կուսակցության Չապորոժիեի, իսկ ապա Դնեպրոպետրովսկի մարզկոմների առաջին քարտուղար, Ձեր ուժերը նվիրաբերեցիք այդ խոշոր ինդուստրիալ կենտրոնների վերականգնմանը, անմիջական մասնակցություն ցուցաբերեցիք Վ. Ի. Լենինի անվան հոշակավոր Դնեպրոգէսի և մետալուրգիայի հսկայի՝ «Չապորոժստալի» վերածնմանը:

Մոլդավիայի և Ղազախստանի աշխատավորները քաջ գիտեն, թե Դուք, Լեոնիդ Իլյիչ, գլխավորելով այդ միութենական հանրապետությունների կուսակցական կազմակերպությունները, որքան շատ ջանքեր, նախաձեռնությունն ու հաստատակամություն եք ներդրել նրանց արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի զարգացման գործում: Ղազախստանի խոպան հողերը երկրի խոշոր շտեմարանի վերածելը նրա պատմության մեջ է մտել իբրև հոյակապ էպոպեա, որի մեջ արձանագրված են նաև Ձեր անունը, Ձեր ակնառու ավանդը:



Սովետական մարդիկ հպարտանում են, որ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի, Կենտկոմի քաղբյուրոյի և անձամբ Ձեր, Լեոնիդ Իլյիչ, արտաքին քաղաքական գործունեության ամեն մի քայլ նվիրված է այդ ազնիվ, մարդասիրական նպատակների իրականացմանը: Խաղաղության ոգեշունչ, կրթոտ պայքարի շնորհիվ Դուք արժանացել եք երկրազնդի բարի կամքի տեր բոլոր մարդկանց երախտագիտությանը, որն իր արտահայտությունը գտավ Ձեզ «Ժողովուրդն և իր խաղաղությունն ամրապնդելու համար» լենինյան մրցանակ շնորհելու և Ց. Ժոլիո-Կյուրիի անվան խաղաղության ոսկե մեդալով պարգևատրելու մեջ:

Իմ պերիալիստական հետադեմ ուժերը ամեն կերպ արգելակում են միջազգային լարվածության թուլացման պրոցեսը և շարունակում սպառազինությունների մրցավազքը: Ուստի, սովետական պետությունը, կուսակցությունը և նրա Կենտրոնական կոմիտեն անգույ հոգատարություն են ցուցաբերում, որպեսզի պատշաճ մակարդակի վրա պահեն մեր հայրենիքի պաշտպանությունը: Անձամբ Դուք, Լեոնիդ Իլյիչ, պաշտպանության խորհրդի նախագահի պոստում մեծ ավանդ եք ներդնում մեր փառապանծ զինված ուժերի շինարարության գործում:

Մեր կուսակցության ամբողջ գործունեության, նրա ներքին ու արտաքին քաղաքականության գիտական հիմքը ստեղծագործաբար կիրառվող և զարգացվող մարքս-լենինյան ուսմունքն է: Մեծ է Ձեր, Լեոնիդ Իլյիչ, անձնական ներդրումը կուսակցության կողմից մարքս-լենինյան գիտության հետագա ստեղծագործական զարգացման բնագավառում, հատկապես զարգացած սոցիալիզմի կառուցման և կոմունիզմին անցնելու պայմանների համեմատ, Ձեր ներդրումը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման արմատական պրոբլեմների խոր մշակման գործում: Սոցիալիստական ինդուստրիայի զարգացման, գյուղատնտեսությունը ըստ ամենայնի զարգացնելու նպատակին ուղղված ագրարային քաղաքականության, հանրային արտադրության արդյունավետության բարձրացման, սոցիալիստական կարգերի առավելությունների հետ գիտատեխնիկական հեղաշրջման նվաճումների զուգորդման, հասարակական հարաբերությունների կատարելագործման, աշխատավորների կոմունիստական դաստիարակության հարցերի, միջազգային հարաբերությունների պրոբլեմների և ՍՄԿԿ-ի ու սովետական պետության արտաքին քաղաքական գործունեության խնդիրների վերաբերյալ Ձեր առաջ քաշած դրույթները հիմնարար նշանակություն ունեն մեր հայրենիքի զարգացման արդի փուլում:

Թանկագին Լեոնիդ Իլյիչ:

Դուք կոմունիստների և բոլոր սովետական մարդկանց խոր հարգանքը, սերն ու վստահությունն եք նվաճել, Ձեր բոլոր ուժերը նվիրաբերելով կուսակցությանն ու ժողովրդին անձնվիրաբար ծառայելուն: Դուք պատվով եք կատարում կուսակցության կողմից Ձեր վրա դրված առաքելությունը, գլխավորելով նրա մարտական շտաբը՝ Կենտրոնական կոմիտեն: Կուսակցությունը և ժողովուրդը գիտեն, թե Դուք ինչպիսի, հիրավի, անսպառ եռանդով, սկզբունքայնությամբ և հեռատեսությամբ եք իրականացնում կոմունիստական շինարարության բարդ ու պատասխանատու խնդիրների լուծման ղեկավարումը:

Դուք մշտական հոգատարություն եք ցուցաբերում մեր հասարակության մեջ կոմունիստական կուսակցության ղեկավար զերի հետագա բարձրացման, ժողովրդական մասսաների հետ նրա կապերի ամրապնդման, կուսակցության և հասարակության կյանքում լենինյան սկզբունքների և նորմաների հաստատման ու զարգացման նկատմամբ, որոնք մեր հաջողությունների պայմանն են:

Թանկագին բարեկամ և ընկեր:

Ձեր բոլոր ընկերներին, կոմունիզմի գործի բոլոր մարտիկներին Դուք Ձեր օրինակով ցույց եք տալիս, թե ինչպիսին պետք է լինի կոմունիստ-լենինյանը: Ձեր ողջ գործունեությունը տողորված է կուսակցության և ժողովրդի ստեղծագործական ուժերի նկատմամբ խորին հավատով, աշխատավոր մարդկանց նկատմամբ սրտազին մոտիկությամբ ու հարգանքով: Դուք աչքի եք ընկնում մարդկանց ոգևորելու և համախմբելու, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի համերաշխ, համախմբված աշխատանքը կազմակերպելու հրաշալի կարողությամբ:

Մեր կոմունիստական կուսակցությունը, նրա Կենտրոնական կոմիտեն, Կենտկոմի քաղբյուրոն և անձամբ Դուք, Լեոնիդ Իլյիչ, հասել եք սովետական հասարակության մեջ իսկական կոլեկտիվիզմի, ընկերական վստահության, հասարակության մեջ մեկտեղ պահանջկոտության ու սկզբունքայնության հարգանքի և դրա հետ մեկտեղ և զարգացման, որը նպաստում է կոմունիզմի կառուցմանը: Սովետական կոմիտեին, Ձեզ, Լեոնիդ Իլյիչ, պակուսակցությանը, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, Ձեզ, Լեոնիդ Իլյիչ, ստասխանում են խոր ու սրտաբուխ շնորհակալության զգացմունքներով: Արտահայտելով այդ զգացմունքներն ու ջերմորեն շնորհավորելով Ձեզ, թանկագին Լեոնիդ Իլյիչ, Ձեր յոթնամյա օրվա առթիվ, Ձեզ ի սրտե մաղթում ենք քաջառողջություն ու երջանկություն, նոր հաջողություններ Ձեր անդուլ ու բազմաբեղուն գործունեության մեջ՝ ի բարօրություն սովետական ժողովրդի, բոլոր աշխատավորների, հանուն խաղաղության և կոմունիզմի պայծառ գաղափարների հաղթանակի:

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ	ՍՍՀՄ
ՍՈՎԵՏԻ	ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ	ՍՈՎԵՏ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ	
ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ	
ԿՈՒՍՍԱՅՈՒԹՅԱՆ	
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ	

Ա.Ո.Ա.ՋԻՆ ԲԱԺԻՆ

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**733** «Ինտերսպուստիկ» տիեզերական կապի միջազգային կազմակերպության իրավունակությամբ, արտոնությունների և իմունիտետների վերաբերյալ համաձայնագիրը վավերացնելու մասին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը որոշում է. վավերացնել ՍՍՀՄ Մինիստրների սովետի հավանությանն արժանացած «Ինտերսպուստիկ» տիեզերական կապի միջազգային կազմակերպության իրավունակության, արտոնությունների և իմունիտետների վերաբերյալ համաձայնագիրը, որը ՍՍՀՄ կառավարության նիստերի վերաբերյալ համաձայնագիրը 1976 թվականի սեպտեմբերի 20-ին: անունից ստորագրվել է Բեռլինում

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՊԳՈՒՆԻ  
 ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության քարտուղար՝ Մ. ԳԵՆՐԳՈՍՅԱՆ

Մոսկվա, Կրեմլ, 14 դեկտեմբերի 1976 թ.  
 № 4860—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**734** Էլեկտրակապի միջազգային կոնվենցիան վավերացնելու մասին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը որոշում է. ՍՍՀՄ Մինիստրների սովետի հավանությունն արժանացած և վավերացման ներկայացված էլեկտրակապի միջազգային կոնվենցիան, որը ՍՍՀՄ-ի անունից ստորագրվել է Մալազա-Տորեմոլինոսում 1973 թվականի հոկտեմբերի 25-ին, վավերացնել ստորագրման ժամանակ արված այն վերապահումով, որ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը «բաց է թողնում ռադիոկապի սեփականության ընդունելու հարցը (ժնև, 1959 թ.)»:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՒՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 14 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4861—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**735** Տնտեսական և տեխնիկական համագործակցության 1961 թվականի հունիսի 2-ի սովետա-սոմալիական համաձայնագրի արձանագրությունը վավերացնելու մասին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը որոշում է. վավերացնել ՍՍՀՄ Մինիստրների սովետի հավանությունն արժանացած և վավերացման ներկայացված՝ Տնտեսական և տեխնիկական համագործակցության 1961 թվականի հունիսի 2-ի սովետա-սոմալիական համաձայնագրի արձանագրությունը, որն ստորագրվել է Մոգադիշոյում 1976 թվականի հունիսի 19-ին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՒՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 14 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4862—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**736** Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գվինեա-Բիսաուի Հանրապետության հյուպատոսական կոնվենցիան վավերացնելու մասին

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը որոշում է. վավերացնել ՍՍՀՄ Մինիստրների սովետի հավանությունն արժանացած և վավերացման ներկայացված՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գվինեա-Բիսաուի Հանրապետության հյուպատոսական կոնվենցիան, որն ստորագրվել է Բիսաուում 1976 թվականի ապրիլի 16-ին:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՒՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 14 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4863—IX

**ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ**

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**737** Ընկ. Ժորժ Կոնիոյին ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Նշելով Ֆրանսիայի և ՍՍՀՄ-ի ժողովուրդների բարեկամական հարաբերությունների զարգացման ուղղությամբ ծավալած բազմամյա ակտիվ գործունեությունը և ծննդյան յոթանասունհինգամյակի կապակցությամբ Ֆրանսիայի կոմկուսի կենտկոմին առընթեր Մորիս Թորեզի ինստիտուտի վարչական խորհրդի նախագահ ընկ. Ժորժ Կոնիոյին պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՒՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 14 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4859—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**738** Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ն. Զ. Շամոտային Լենինի շքանշանով պարգևատրելու մասին

Սովետական գրականագիտության զարգացմանը, գիտական կադրերի պատրաստմանը մատուցած մեծ ծառայությունների, հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության համար և ծննդյան վաթսուներեքամյակի կապակցությամբ Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Նիկոլայ Զախարովիչ Շամոտային պարգևատրել Լենինի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՒՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 16 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4888—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**739** Ընկ. Յա. Ա. Մալիկին Լենինի շքանշանով պարգևատրելու մասին

Գիվանագիտական աշխատանքում մատուցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասուներեքամյակի կապակցությամբ ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրի տեղակալ ընկ. Յակով Ալեքսանդրովիչ Մալիկին պարգևատրել Լենինի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՒՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուլար՝ Մ. ԳԵՈՐԳԱԶԵ

Մոսկվա, Կրեմլ, 16 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4889—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**740** Ընկ. Ն. Պ. Բոգդանովին Հոկտեմբերյան հեղափոխության շֆանշանով պարգևատրելու մասին

Հեղափոխական շարժմանը ունեցած մասնակցության, հասարակական ակտիվ գործունեության համար և ծննդյան ու թսուկամյակի կապակցությամբ ընկ. Նիկոլայ Պետրովիչ Բոգդանովին պարգևատրել Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՌՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՋԵ

Մոսկվա, Կրեմլ, 16 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4887—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**741** Պորտուգալական կոմպոզիտոր Ֆեռնանդո Լոպեշ Գրասին ժողովուրդների բարեկամության շֆանշանով պարգևատրելու մասին

Պորտուգալացի և Սովետական Միության ժողովուրդների բարեկամության և կուլտուրական համագործակցության զարգացման և ամրապնդման գործում ծավալած ակտիվ գործունեության համար և ծննդյան յոթանասունամյակի կապակցությամբ պորտուգալական կոմպոզիտոր Ֆեռնանդո Լոպեշ Գրասին պարգևատրել ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՌՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՋԵ

Մոսկվա, Կրեմլ, 16 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4890—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**742** Ն. Ֆ. Մանոյլոյին, Ա. Յու. Մոկրենկոյին և Ն. Ա. Սուրժինային ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում շնորհելու մասին

Սովետական երաժշտական արվեստի զարգացման գործում ձեռք բերած մեծ նվաճումների համար ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչում շնորհել:

Նիկոլայ Ֆյոդորովիչ Մանոյլոյին — Խարկովի Ն. Վ. Լիսենկոյի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մենակատար Անատոլի Յուրևիչ Մոկրենկոյին — Ուկրաինական ՍՍՀ Տ. Գ. Շևչենկոյի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մենակատար Նոննա Անդրեևնա Սուրժինային — Դնեպրոպետրովսկի օպերայի և բալետի պետական թատրոնի մենակատարուհի:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՌՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՋԵ

Մոսկվա, Կրեմլ, 17 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4897—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**743** ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր ֆարտուղար, Սովետական Միության հերոս, Սոցիալիստական աշխատանքի հերոս ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին և «Ոսկե աստղ» երկրորդ մեդալով պարգևատրելու մասին

Կոմունիստական շինարարության գործում կոմունիստական կուսակցությանն ու սովետական պետությանը մատուցած ակնառու ծառայությունների, ժողովուրդների խաղաղության և անվտանգության ամրապնդման ասպարեզում ակտիվ, բեղմնավոր գործունեության համար, Հայրենական մեծ պատերազմում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակի գործում, Սովետական Միության տնտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդման ասպարեզում ներդրած անձնական մեծ ավանդի համար և ծննդյան յոթանասնամյակի կապակցությամբ ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր ֆարտուղար, Սովետական Միության հերոս, Սոցիալիստական աշխատանքի հերոս ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին պարգևատրել Լեոնիդ շքանշանով և Սովետական Միության հերոսի «Ոսկե աստղ» երկրորդ մեդալով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՌՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՋԵ

Մոսկվա, Կրեմլ, 18 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4899—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**744** ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր ֆարտուղար, ՍՍՀՄ պաշտպանության խորհրդի նախագահ, Սովետական Միության մարշալ Լ. Ի. Բրեժնևին ՍՍՀՄ պետական գերբի ոսկեդրոշմ պատկերով պատվավոր զենքով պարգևատրելու մասին

Երկրի պաշտպանունակության ամրապնդման և ՍՍՀՄ զինված ուժերի կատարելագործման ասպարեզում ունեցած ակնառու ծառայությունների համար ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր ֆարտուղար, ՍՍՀՄ պաշտպանության խորհրդի նախագահ, Սովետական Միության մարշալ Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին պարգևատրել ՍՍՀՄ պետական գերբի ոսկեդրոշմ պատկերով պատվավոր զենքով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. ՊՈՂԳՈՌՆԻ  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. ԳԵՈՐԳԱՋԵ

Մոսկվա, Կրեմլ, 18 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4900—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**745** ԸՆԿ. Ի. Տ. Նովիկովին Լենինի շքանշանով պարգևատրելու մասին

Կոմունիստական կուսակցությանն ու սովետական պետությանը մատուցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասունամյակի կապակցությամբ ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ, ՍՍՀՄ Մինիստրների սովետի շինարարության գործերի պետական կոմիտեի նախագահ ընկ. Իգնատի Տրոֆիմովիչ Նովիկովին պարգևատրել Լենինի շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. Պոդգոռնի  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. Գեորգիև

Մոսկվա, Կրեմլ, 18 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4901—IX

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

**746** ԸՆԿ. Ն. Գեորգիևին Ժողովուրդների բարեկամության շքանշանով պարգևատրելու մասին

Բուլղարիայի ժողովրդական Հանրապետության և Սովետական Միության ժողովուրդների եղբայրական բարեկամության և համագործակցության ամրապնդման և զարգացման գործում մատուցած մեծ ծառայությունների համար և ծննդյան յոթանասունամյակի կապակցությամբ բուլղարական հասարակական գործիչ, Բուլղարա-սովետական բարեկամության համաժողովրդական կոմիտեի նախագահի տեղակալ ընկ. Նիկոլայ Գեորգիևին պարգևատրել Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. Պոդգոռնի  
ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ֆարտուղար՝ Մ. Գեորգիև

Մոսկվա, Կրեմլ, 18 դեկտեմբերի 1976 թ.  
№ 4902—IX

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ընդունելությունն Ն. Վ Պողոսյանի մաս

Գեկտեմբերի 15-ին ՍՍԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ՝ Ն. Վ. Պողոսյանին Կրեմլում ընդունեց Իսլանդիայի արտաքին գործերի մինիստր Գ. Ֆիտցջերալդին, որը Սովետական Միությունում է գտնվում պաշտոնական այցով:

Բարեկամական զրույցի ընթացքում արծարծվեցին Սովետական Միության ու Իսլանդիայի հարաբերությունների զարգացման հարցերը և հայտնվեց դրանց ընդլայնման և խորացման գիծը շարունակելու երկու կողմերի մտադրությունը:

Շոշափվեցին նաև արդի միջազգային դրույթյան մի շարք կարևոր հարցեր և հավաստվեց կողմերի ձգտումը՝ նպաստելու խաղաղության ամրապնդմանը և իրավահավասար միջազգային համագործակցության զարգացմանը:

Զրույցին ներկա էին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստրի տեղակալ Ի. Ն. Զեմսկովը, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության միջազգային կապերի բաժնի վարիչ Վ. Գ. Վիսոտինը, Իսլանդիայում ՍՍՀՄ դեսպան Ա. Ս. Կապլինը, ՍՍՀՄ արտգործմինիստրության կոլեգիայի անդամ Վ. Պ. Սուսլովը, ինչպես նաև Իսլանդիայի արտաքին գործերի մինիստրի մշտական տեղակալ Պ. Կիտինգը, ՍՍՀՄ-ում Իսլանդիայի դեսպան է. Գ. Բրենանը, մինիստրին ուղեկցող այլ անձինք:

«ՀԵՐՈՍՈՒՅԻ ՄԱՅՐ» ՊԱՏՎԱԿՈՐ ԿՈՉՄԱՆ  
ՇՆՈՐՀՈՒՄ ԲՍՁՄՍՁԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը 1976 թվականի նոյեմբերի 30-ի և դեկտեմբերի 14-ի հրամանագրերով «Հերոսուհի մայր» պատվավոր կոչում է շնորհել հանձնելով «Հերոսուհի մայր» շքանշան և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության շնորհագիր, ՌՍՖՍՀ-ում բնակվող 139, Բելոռուսական ՍՍՀ-ում՝ 6, Ղազախական ՍՍՀ-ում՝ 218, Վրացական ՍՍՀ-ում՝ 5, Ադրբեջանական ՍՍՀ-ում՝ 125, Մոլդավական ՍՍՀ-ում՝ 14, Կիրգիզական ՍՍՀ-ում՝ 80, Թուրքմենական ՍՍՀ-ում՝ 132 և էստոնական ՍՍՀ-ում բնակվող 3 բազմազավակ մայրերի:

Հրամանագրերը հրապարակվում են «ՍՍՀՄ Գերագույն սովետի տեղեկագրի» ուսերեն հրատարակության № 51-ի հավելվածում:

ՍՍՀՄ Գերագույն սովետի պատվիրակության ուղևորությունը Բիրմական Միություն Սոցիալիստական Հանրապետություն

Բիրմական պառլամենտի հրավերով դեկտեմբերի 1-ից մինչև 8-ը պատասխան պաշտոնական այցով Բիրմայում էր գտնվում ՍՍՀՄ Գերագույն սովետի պատվիրակությունը՝ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ, Ուղբեկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Մ. Մատչանովի գլխավորությամբ:

Ռանգունում պատվիրակությանը ընդունեց բիրմական սոցիալիստական ծրագրի կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար, Բիրմայի պետական խորհրդի քարտուղար զենեբալ Սան Յան: Պատվիրակությունը հանդիպումներ և զրույցներ ունեցավ ժողովրդական ժողովի նախագահ Քհանտ Մաունգի,

ժողովրդական ժողովի նախագահության անդամների, նրա մշտական հանձնա-  
ժողովների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի ղեկավարների,  
ղեկավարների, և բիրմական պաշտոնական ալ անձանց հետ:

Հանդիպումների և զրույցների ընթացքում սովետական և բիրմական  
պառլամենտականները ինֆորմացիա փոխանակեցին ՍՍՀՄ Գերագույն սովետի  
և Բիրմայի ժողովրդական ժողովի գործունեության մասին, ինչպես նաև կար-  
ծիքներ փոխանակեցին երկու երկրների բարեկամական փոխհարաբերություն-  
ների հետագա զարգացման որոշ հարցերի շուրջը:

Պատվիրակության անդամները պսակ դրեցին Բիրմայի ազգային հերոս  
Աուն Սանի և նրա զինակիցների դամբարանին:

Սովետական պառլամենտականները ուղևորություն կատարեցին երկրում,  
որի ժամանակ նրանք զրույցներ ունեցան Ռանգունի և Մանդալայի օկրուգների,  
Շանի ազգային մարզի, մի շարք շրջանների ժողովրդական խորհուրդների և  
կուսակցական կոմիտեների ղեկավարների հետ: Պատվիրակության անդամնե-  
րը այցելեցին Բիրմայի մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ և  
ուսումնական հաստատություններ, հանդիպումներ ունեցան գյուղական  
շրջանների աշխատավորների հետ, ծանոթացան երկրի տեսարժան վայրերին:  
Պատվիրակությանն ամենուրեք ցույց տրվեց ջերմ, սիրալիբ ընդունելություն:

### Կ Ո Մ Յ Ո Ւ Ն Ի Կ Ե

## ՍՍՀՄ Գերագույն սովետի Միության սովետի և Ազգայությունների սովետի արտաքին գործերի հանձնաժողովների պատվիրակության Ֆրանսիայում գտնվելու մասին

Ֆրանսիական Հանրապետության Ազգային ժողովի արտաքին գործերի  
հանձնաժողովի հրավերով 1976 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 12-ը  
Ֆրանսիայում էր գտնվում ՍՍՀՄ Գերագույն սովետի Միության սովետի և  
Ազգայությունների սովետի արտաքին գործերի հանձնաժողովների պատվիրակ-  
ությունը: Սովետական պատվիրակությունը գլխավորում էր ՍՄԿԿ Կենտկոմի  
քաղբյուրոյի անդամության թեկնածու, ՍՄԿԿ Կենտկոմի քարտուղար, Ազգու-  
թյունների սովետի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Պ. Ն.  
Պոնոմարյովը:

Սովետական պատվիրակության ղեկավար Բ. Ն. Պոնոմարյովը Փարիզում  
եղած ժամանակ հանդիպումներ ունեցավ Ազգային ժողովի նախագահ է. Ֆորի  
և արտաքին գործերի մինիստր Լ. դը Գիրենգոյի հետ:

Երկու պատվիրակությունների միջև տեղի ունեցավ կարծիքների  
կոնստրուկտիվ փոխանակում: Ուշադրությունը բեկովեց բոլոր բնագավառնե-  
րում սովետա-ֆրանսիական համագործակցության հարցի վրա, ներառյալ  
պառլամենտների կոնտակտների ընդլայնումը, ինչպես նաև միջազգային  
զրույցի հիմնական պրոբլեմների վրա:

Մտքերի այդ փոխանակմանը սովետական կողմից մասնակցում էին  
Բ. Ն. Պոնոմարյովը, Գ. Տ. Բերեգովայը, Գ. Ա. Ժուկովը, Ն. Ն. Ինոկենցևը,  
Ա. Մ. Կունակը, Մ. Ա. Ստեյվախը, Ա. Բ. Չակովսկին:

Ֆրանսիական կողմից մասնակցեցին Ֆրանսիայի Ազգային ժողովի  
արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Մ. Կուլ դե Մյուրվիլը, հանձ-  
նաժողովի բյուրոների քարտուղարներ Կ. Ռուն և Կ.-Ժ. Մարկյուն, հանձնաժո-  
ղովի անդամներ, ղեկավարներ Լ. Բայոն, Ա. Բետանկուրը, Յ. Բիլյուն,  
ժ. դե Բրոյը, Ա. Շանդեռնակորը, Ժ.-Մ. Դանեն, է. Ֆափոնը, Ա. Գեյրոն, Լ. Ժոբ-  
սը, Ա. Լեբոնը:

Հանդիպումներն ու զրույցներն անցան բարեկամական մթնոլորտում,  
որը բնութագրում է սովետա-ֆրանսիական հարաբերությունները:

Երկու կողմերն էլ գոհունակությամբ ընդգծեցին, որ ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի  
համագործակցությունը, որի առանցքում միշտ գտնվել են եվրոպական ու  
միջազգային անվտանգության արմատական հարցերը և լարվածության թու-  
լացման պրոբլեմը, ծանրակշիռ ավանդ է մուծել և շարունակում է մուծել  
լացման պրոբլեմը, ծանրակշիռ ավանդ է մուծել և շարունակում է մուծել

Եվրոպայի ու աշխարհի իրադրության բարելավման գործում:

Սովետական և ֆրանսիական համագործակցության հարաբերությունները  
երկրների բարեկամության և զարգացման իբրև եվրոպայի խաղաղության, անվտանգու-  
այսուհետև ևս պետք է ծառայեն իբրև եվրոպայի խաղաղության, անվտանգու-  
թյան ու լարվածության թուլացման ամրապնդման, ինչպես նաև սովետական  
և ֆրանսիական ժողովուրդների մշտական մերձեցման կարևոր գործոն: Պետք է  
շարունակել ջանքեր գործադրել և օգտագործել բոլոր հնարավորությունները  
քաղաքական համագործակցության, տնտեսական, գիտատեխնիկական կապե-  
րի և կուլտուրական փոխանակումների բնագավառում ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի  
հարաբերություններն առաջ մղելու համար:

Սովետական և ֆրանսիական պառլամենտականները իրենց կողմից  
կգործեն այդ ուղղությամբ:

Սովետական պատվիրակությունը ֆրանսիական պատվիրակությանը  
մանրամասն ինֆորմացիա տվեց ՍՍՀՄ տասներորդ հնգամյա պլանի, Սովե-  
տական Միության էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման, ինչպես նաև  
ժողովրդի կենսամակարդակի անշեղ բարձրացման մասին:

Գոհունակությամբ նշվեց, որ վերջին տարիներս խաղաղասեր պետու-  
թյունների ձեռնարկած ջանքերի հետևանքով ամրապնդվել է լարվածության  
թուլացման միտումը, հեռացվել է միջուկային պատերազմի սպառնալիքը,  
հաստատուն է դարձել խաղաղությունն ու համընդհանուր անվտանգությունը:

Ֆրանսիական պատվիրակությանը համարում, որ խորհրդակցության մասնակից  
համարում է դարձել խաղաղությունն ու համընդհանուր անվտանգությունը:

Երկու կողմերը կարևոր են համարում, որ խորհրդակցության մասնակից  
բոլոր պետությունները անշեղորեն և լիակատար ծավալով կատարեն Հելսին-  
կիում ձեռք բերված սկզբունքներն ու պայմանավորվածությունները: Նրանք  
մտադիր են շարունակել գործել լարվածության թուլացման քաղաքականության  
օգտին, որին նվիրված լինելը Սովետական Միությունն ու Ֆրանսիան վերջերս  
կրկին հաստատեցին, այն հաշվով, որպեսզի այդ պրոցեսը լինի անդառնալի և  
համընդհանուր:

Երկու պատվիրակություններն էլ առանձնահատուկ ուշադրություն հատ-  
կացրին զինաթափմանը և ռազմական դիմակայության նվազեցմանը նպատա-  
կամղված միջոցառումներին, որոնք կոչված են քաղաքական լարվածության  
թուլացումը լրացնելու ռազմական բնագավառում լարվածության թուլացմամբ,  
ամրապնդելու եվրոպական և միջազգային անվտանգությունը:

Նրանք արտահայտվեցին սպառնալիքի վերացմանը, ընդհանուր ու  
մանր և միջուկային պատերազմի սպառնալիքի վերացմանը, ընդհանուր ու  
լրիվ զինաթափմանը, ներառյալ միջուկային զինաթափումը, նպատակամղված  
ջանքերը շարունակելու և ակտիվացնելու օգտին, միջազգային խիստ և արդյու-  
նավետ հսկողության ներքո:

Երկու պատվիրակություններն էլ ընդգծեցին միջուկային զենքը շտարածե-  
լու կարևորությունը, որը առանց խտրականության բոլոր երկրներին չպետք է  
խանգարի միջուկային էներգիան օգտագործել խաղաղ նպատակներով:

Հիշատակելով 1975 թվականին Մոսկվայում ստորագրված Դեկլարացիա-  
յում շարադրված դիրքորոշումը, երկու կողմերը ցանկություն հայտնեցին  
շուտափուլ կերպով զինաթափման համաշխարհային կոնֆերանս հրավիրելու  
մասին:

Երկու կողմերը դրականորեն են գնահատում իրենց պառլամենտների  
կապերի զարգացումը, այդ կապերը գիտելով որպես ՍՍՀՄ-ի և Ֆրանսիայի  
համագործակցության ընդլայնման էական տարրերից մեկը: ՍՍՀՄ Գերագույն  
սովետը և Ֆրանսիայի Ազգային ժողովը կոչված են աջակցելու բարեկամու-  
թյան և հարգանքի ամրապնդմանը, որ միմյանց նկատմամբ տածում են  
սովետական ու ֆրանսիական ժողովուրդները:

ՍՍՀՄ Գերագույն սովետի պալատների արտաքին գործերի հանձնաժողով-  
ների պատվիրակությունը Ֆրանսիայի Ազգային ժողովի արտաքին գործերի

ներքին գործերի հանձնաժողովի և արտաքին գործերի հանձնաժողովի

Հանձնաժողովի պատվիրակությանը հրավիրեց Սովետական Միության այցելել երկու կողմերին հետաքրքրող պրոբլեմների շուրջը կարծիքների փոխանակությանը շարունակելու համար: Հրավերն ընդունվեց գոհունակությամբ:

**ՍՍՀՄ-ի պատվիրակությունը Մեքսիկայում**

Նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 6-ը Մեքսիկայում էր գտնվում Սովետական Միության պատվիրակությունը՝ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Պ. Գ. Գիլաշվիլու գլխավորությամբ: Պատվիրակությունը մասնակցեց պրեզիդենտական իշխանության հանձնման հանդիսավոր արարողությանը:

Պատվիրակությանը ընդունեց Մեքսիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Խոսե Լոպես Պորտիլիոն: Պրեզիդենտին հանձնվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Վ. Պոդգոռնու ուղերձը: Տեղի ունեցած զրույցի ժամանակ պրեզիդենտ Խ. Լոպես Պորտիլիոն նշեց, թե ինքը լիովին համամիտ է ուղերձում հայտնված այն կարծիքին, որ անհրաժեշտ է էլ ավելի զարգացնել ու ամրապնդել սովետա-մեքսիկական հարաբերությունները՝ ի շահ երկու երկրների ժողովուրդների:

Պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան նաև Մեքսիկայի նոր նշանակված արտաքին գործերի մինիստր Ս. Ռոել Գարսիայի, այլ մինիստրների, կոնգրեսի Դեպուտատների պալատի նախագահ Ա. Գոմես Վիլյանուելայի և Մեքսիկայի պառլամենտի անդամների հետ: Զրույցների ժամանակ նրանք գոհունակություն հայտնեցին Սովետական Միության ու Մեքսիկայի փոխհարաբերությունների վիճակի առթիվ և ընդգծեցին, որ նոր ադմինիստրացիան այսուհետև նույնպես կզարգացնի ու կամրապնդի սովետա-մեքսիկական համագործակցությունը:

**ՎԱՐՉԱ-ՏԵՐԻՏՈՐԻԱԿԱՆ ԲԱՎԱՆՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՍՍՀ

ՉՄԻԵՎ ԲԱՂԱՔԻ ԵՎ ՉՄԻԵՎԻ ՇՐՋԱՆԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԸ

Նպատակ ունենալով հավերժացնել շխտարկական ու միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման ականավոր գործիչ Կլիմենտ Գոտվալդի հիշատակը և հաշվի առնելով հարկովի մարզի Ձմիև բաղաբի և Ձմիևի շրջանի աշխատավորների ցանկությունները, Ուկրաինական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը 1976 թվականի նոյեմբերի 26-ի հրամանագրով Ձմիև բաղաբը վերանվանեց Գոտվալդ բաղաբի և Ձմիևի շրջանի: Գոտվալդի շրջանի:


ՈՐՈՇ ԲԱՂԱՔՆԵՐԻ ԴԱՍՈՒՄԸ ՄԱՐՉԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Ուկրաինական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը 1976 թվականի դեկտեմբերի 6-ի հրամանագրով մարզային ենթակայության բաղաբների կարգն է դասել Ղրիմի մարզի Կրասնոպրեկոպսկ, Պոլտավայի մարզի Միրգորոդ, Գոնեցկի մարզի Յասինովատայա բաղաբները:

ՎԱՐՉԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒՄԸ

Ուկրաինական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը 1976 թվականի դեկտեմբերի 6-ի հրամանագրով Գոնեցկի մարզի Յասինովատայայի շրջանի Ավդեևկա բաղաբը հանձնել է աշխատավորների դեպուտատների Յասինովատայայի բաղաբային սովետի ենթակայությանը:

# ВЕДОМОСТИ ВЕРХОВНОГО СОВЕТА СОЮЗА СОВЕТСКИХ СОЦИАЛИСТИЧЕСКИХ РЕСПУБЛИК



ГОД ИЗДАНИЯ 39-й

№ 51 (1865)

22 декабря 1976 г.

## СОДЕРЖАНИЕ

Товарищу Брежневу Леониду Ильичу.

### РАЗДЕЛ ПЕРВЫЙ

- 733. Указ Президиума Верховного Совета СССР о ратификации Соглашения о право-способности, привилегиях и иммунитетах международной организации космиче-ской связи «Интерспутник».
- 734. Указ Президиума Верховного Совета СССР о ратификации Международной кон-венции электросвязи.
- 735. Указ Президиума Верховного Совета СССР о ратификации Протокола к советско-сомалийскому Соглашению об экономическом и техническом сотрудничестве от 2 июня 1961 года.
- 736. Указ Президиума Верховного Совета СССР о ратификации Консульской конвенции между Союзом Советских Социалистических Республик и Республикой Гвинея-Бисау.

### РАЗДЕЛ ВТОРОЙ

- 737. Указ Президиума Верховного Совета СССР о награждении тов. Жоржа Коньо орденом Дружбы народов.
- 738. Указ Президиума Верховного Совета СССР о награждении академика Академии наук Украинской ССР Шамоты Н. З. орденом Ленина.
- 739. Указ Президиума Верховного Совета СССР о награждении тов. Малика Я. А. орденом Ленина.
- 740. Указ Президиума Верховного Совета СССР о награждении тов. Богданова Н. П. орденом Октябрьской Революции.
- 741. Указ Президиума Верховного Совета СССР о награждении португальского компо-зителя Фернандо Лопеша Граса орденом Дружбы народов.

742. Указ Президиума Верховного Совета СССР о присвоении почетного звания народного артиста СССР Маноило Н. Ф., Мокренко А. Ю. и Суржиной Н. А.
743. Указ Президиума Верховного Совета СССР о награждении Генерального секретаря ЦК КПСС Героя Советского Союза, Героя Социалистического Труда товарища Брежнева Леонида Ильича орденом Ленина и второй медалью «Золотая Звезда».
744. Указ Президиума Верховного Совета СССР о награждении Генерального секретаря Центрального Комитета КПСС, Председателя Совета Оборона СССР Маршала Советского Союза Брежнева Л. И. Почетным оружием с золотым изображением Государственного герба СССР.
745. Указ Президиума Верховного Совета СССР о награждении тов. Новикова И. Т. орденом Ленина.
746. Указ Президиума Верховного Совета СССР о награждении тов. Н. Георгиева орденом Дружбы народов.

## РАЗДЕЛ ТРЕТИЙ

В Президиуме Верховного Совета СССР.

Прием у Н. В. Подгорного.

Присвоение почетного звания «Мать-героиня» многодетным матерям.

Поездка делегации Верховного Совета СССР в Социалистическую Республику Бирманский Союз.

Коммюнике о пребывании во Франции делегации Комиссий по иностранным делам Совета Союза и Совета Национальностей Верховного Совета СССР.

Делегация СССР в Мексике.

Об изменениях в административно-территориальном делении.

## ТОВАРИЩУ БРЕЖНЕВУ ЛЕОНИДУ ИЛЬИЧУ

Дорогой Леонид Ильич!

